տակ: Երկայն բազուկներ, դէպի յետ չրջած ահագին ձեռքերով, որ անընդհատ ճօճում են: Ծայրը ծայրին նայող, ծուռ ոտքեր, որոնց շուրջը լողում է մոխրագոյն մի վերարկու:

Մարդը գնում է, ու տները կարծես շարժւում են ներսի անհանգիստ մտածողների հետ միասին: Փողոցից ելեքտրական հոսանքներ են անցնում ու մխրճւում խոր լռութեան մէջ:

Մարդը ժպտում է, քայլերը արագացնում: Կէս գիշեր է:

(Շարունակելի)

ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

Կ'իջնէ մութը վերստին, կը պարուրէ ամէն բան,
Ու կեանքիս հետ օրէ օր կը մօտենայ վախճանին.
— Հազար լուսնակ խորին մէջ շողշողացին ու անցան,
Ու հիմա այդ բոլորէն չի մնաց ցոլք մ'իսկ յետին:

Ես հոսեցայ դաշտերէն, արտերուն մէջ կիսուեցայ
Առուակ առուակ՝ անսպառ մեծ բարութեան մը հանգոյն.
Ու անցնելով աւերքէն ժամանակին՝ հասկցայ,
Որ զիս քշող օրէնքը կ'իշխէր բոլոր իրերուն:

Ես հոսեցայ անթափանց անտառներու սիրտերէն,
Ուր ջուրերն իմ մթնցան խորհուրդներով անծանօթ.
Երակի պէս հոն թաղուիլ տարփանքս եղաւ տարօրէն,
Սակայն, պարտ էր ինձ յանգիլ նախորոշուած հունին մօտ:

Ես ալ գիտցայ մռնչել վիհերն ի վար, հնչեցնել
Ձորերն՝ ինձ դէմ բրռնուած դաշտերու պէս մետաղէ,
Ինքզինքս զգալ յաղթական՝ տարրերու վրայ անարգել,
Քանդել պրկող զիս կամուրջն ինչպէս պսակ բաղեղէ:

Երբ սկսան ծաղկները, բռնկած բոցովն արեւուն,
Կնդրուկի պէս ափերուս վրայ իրենց բոյրը թափել,
Ես ալ պատրանքն ապրեցայ սիրոյ շէնշող աչքերուն՝
Երբ փորձեցին՝ աստղի պէս՝ անյատակ սիրտս չափել:

Բայց չի գտայ, չի գտա՜յ կեանք մ'որ խառնուէր իմինին՝
Ծաղիկներու բոյրերէն մինչեւ անել գերեզման.
— Մին համբոյր մը թողած հոն, միւսը արցունք մ'անանուն
Դեռ չի հասած վախճանիս՝ զերթ երազներ չքացան:

Այսպէս՝ լեցուն ցաւերով, փլատակներով փառքերու,
Կ'առնէ դանդաղ հոլովն իր կեանքս դէպ իր հուսկ Հանգրուան,
Ու երկրային յոյսերու վրայ, երկնային ցոլքերու,
Կ'իջնէ մութը վերստին, կը պարուրէ ամէն բան...

Կ. ԷՕՔՍԻԻԶԵԱՆ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան